ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

«_____»_____ 2025 **թվականի** N ____ -Ն

ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԸ ԿԱՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ԱՅՆՏԵՂ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԸ ԿԱՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.8-րդ կետի, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 5.3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ մասերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանելու համար վճարների չափը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ. ՄԱԼԽԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Հ. ՂԱԶԱՐՅԱՆ
Դ. ՄԱՆՎԵԼՅԱՆ
Կ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ա. ՉԱԴՐՅԱՆ
Զ. ՄԻՆԱՍՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2025 թ._____«___»-ի
N ___-Ն որոշման

ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԸ ԿԱՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ԱՅՆՏԵՂ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԸ ԿԱՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ

1. Շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի տեղափոխումը հատուկ տարածք իրականացվում է մեկ այլ տրանսպորտային միջոցի օգնությամբ:

2. Հատուկ տարածք է սահմանվում Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի 5/4 հասցեի տարածքը:

3. Տեսուչը կազմում է շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու վերաբերյալ արձանագրություն՝ համաձայն Ձև 1-ի, իսկ կրկնօրինակը հանձնվում կամ ուղարկում է շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը կամ շահագործողին՝ վերջինիս վերաբերյալ տեղեկատվություն ունենալու դեպքում և Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, ինչպես նաև համապատասխան հայտարարություն է տեղադրվում Գյումրու համայնքապետարանի պաշտոնական համացանցային gyumricity.am կայքում:

4. Գյումրու համայնքապետարանի պաշտոնական համացանցային gyumricity.am կայքում տեղադրվող հայտարարությունը պետք է պարունակի շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի համարանիշը, լուսանկարը, նրա տարհանման ամսաթիվը և այն հասցեն, որտեղից կատարվել է նրա տեղափոխումը:

5. Շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու վերաբերյալ արձանագրությունում նշվում են հետևյալ հիմնական տեղեկությունները.

1) արձանագրությունը կազմող պաշտոնատար անձի (տեսուչի) պաշտոնը, անունը և ազգանունը,

2) շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը, հաշվառման համարանիշը՝ առկայության դեպքում, դռների և պատուհանների բաց կամ փակ վիճակը,

3) շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ շահագործողի կամ աշխատակցի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթուղթ, հասցե, հեռախոսահամար), եթե դրանք հայտնի են կամ վերջիններիս կողմից տրամադրվում են,

4) տեղափոխման և պահպանման համար գանձվող վճարների չափը:

6. Արձանագրության կազմման պահին շրջիկ առևտրի կետում առկա այն ապրանքները, որոնք ունեն փչացման կամ վնասման հավանականություն, հանձնվում են շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը կամ շահագործողին: Հանձնման մասին արձանագրությունում կատարվում է համապատասխան նշում:

7. Եթե շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը տեղափոխելիս դրա սեփականատիրոջ կամ շահագործողի գտնվելու վայրը անհայտ է, ապա նախ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ՝ նրանց հայտնաբերման համար, և միայն հետո կատարվում է տեղափոխումը:

8. Տեղափոխելու գործընթացը շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ շահագործողի համաձայնությամբ կամ անձնական տվյալների ապանձնավորումը ապահովելու եղանակով և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով սահմանված կարգով կարող է տեսաձայնագրվել կամ լուսանկարահանվել, որի դեպքում նյութերը կցվում են արձանագրությանը: Արձանագրության և տեսանյութերի կրկնօրինակները հանձնվում են հատուկ տարածքի պատասխանատու անձին, իսկ բնօրինակները պահպանվում են Գյումրու համայնքապետարանի աշխատակազմում:

9. Շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու համար գանձվում է վճար՝ 30,000 ՀՀ դրամի չափով:

10. Հատուկ տարածքում շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի պահպանման համար գանձվում է վճար՝

1) յուրաքանչյուր ժամի համար՝100 ՀՀ դրամի չափով,

2) յուրաքանչյուր օրվա համար՝ 3,000 ՀՀ դրամի չափով:

11. Հատուկ տարածք տեղափոխված շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը դրա սեփականատիրոջը, նրա լիազորած անձին կամ տրանսպորտային միջոցը շահագործողին հանձնվում է հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծախսերն ամբողջությամբ փոխհատուցելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

12. Շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելուց անմիջապես հետո հատուկ տարածքի պատասխանատու անձը կատարում է համապատասխան գրառում հատուկ տարածքում շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի հաշվառման մատյանում:

13. Հատուկ տարածք շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի մուտք գործելու և հատուկ տարածքից շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը բաց թողնելու ժամանակ հաշվառման մատյանում նշվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) հատուկ տարածք տեղափոխված (հատուկ տարածքից բաց թողնված) շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը,

2) հատուկ տարածք շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը մուտք գործելու (հատուկ տարածքից շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը բաց թողնելու) ժամանակը (ամիս, ամսաթիվ, ժամ, րոպե),

3) շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածքում պահպանելու ժամկետը (օր, ժամ),

4) շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու արձանագրության համարը և կազմելու ամսաթիվը,

5) հատուկ տարածքում շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի պահպանման համար հաշվարկված գանձման ենթակա վճարների չափը,

6) շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու ծախսերի փոխհատուցման մասին տվյալներ, փոխադրողի անունը, ազգանունը, ստորագրությունը,

7) հատուկ տարածքի համար պատասխանատու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը,

8) հատուկ տարածքից բաց թողնվող շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի, ինչպես նաև դրանում առկա գույքի անվնաս լինելու վերաբերյալ դրա սեփականատիրոջ, նրա լիազորած անձի կամ շահագործողի հայտարարությունները, նրա անունը, ազգանունը, ստորագրությունը:

14. Հատուկ տարածք տեղափոխված շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը դրա սեփականատիրոջը կամ նրա լիազորած անձին, 3-օրյա ժամկետում, հանձնվում է այդ մասին արձանագրություն կազմելուց հետո՝ համաձայն Ձև 2-ի:

15. Հատուկ տարածքում հատուկ տարածքի պատասխանատու անձի կողմից, թղթային տարբերակով, երեք տարի ժամկետով պահպանվում են հետևյալ փաստաթղթերը.

1) շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք մուտք գործելու և հատուկ տարածքից բաց թողնելու հաշվառման մատյանը,

2) շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու և հատուկ տարածքից բաց թողնելու վերաբերյալ արձանագրությունները,

3) հատուկ տարածք տեղափոխման համար հաշվարկված վճարի, ինչպես նաև հատուկ տարածքում շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի գտնվելու տևողության և, ըստ դրա, պահպանման համար գանձման ենթակա և փաստացի գանձված գումարի չափի վերաբերյալ վճարային փաստաթղթերը (դրանց առկայության դեպքում):

16. Սույն կարգի 15-րդ կետում նշված ժամկետը լրանալուց հետո նշված փաստաթղթերը ենթակա են հանձնման Գյումրու համայնքապետարանի աշխատակազմին՝ արխիվացման նպատակով:

17. Շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը մեկ տարի ժամկետում հատուկ տարածքում կայանելու պարագայում, եթե սույն որոշմամբ սահմանված տեղափոխման ու հատուկ տարածքում պահպանության ծախսերը չեն հատուցվել, հատուկ տարածքի պատասխանատուն այդ մասին գրավոր տեղեկացնում է Գյումրու համայնքապետարան՝ գումարը օրենքով սահմանված կարգով բռնագանձելու և տվյալ գույքի հետագա տնօրինման հարցը լուծելու համար:

Ձև 1

«_____» _____ 20 թ. ք. Գյումրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ _____

(շրջիկ առևտրի կետը կամ շրջիկ առևտուր իրականացնող տրանսպորտային միջոցների համար կայանատեղիում կայանված տրանսպորտային միջոցը տեղափոխելու մասին)

Ես՝ _____

արձանագրությունը կազմող պաշտոնատար անձի (տեսուչի) պաշտոնը, անունը և ազգանունը

մասնակցությամբ՝ _____

մասնակիցների տվյալները

ներկայությամբ՝_____

տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ շահագործողի կամ աշխատակցի տվյալները՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթուղթ, բնակության կամ ծանուցման հասցե, հեռախոսահամար, կոնտակտային այլ տվյալներ

ղեկավարվելով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 5.3 հոդվածով և Գյումրի համայնքի ավագանու_____ թիվ ___ Ն որոշման պահանջներով, կազմեցի սույն արձանագրությունն այն մասին, որ 20 թ._____ –ին ժամը____ին Գյումրի քաղաքի _____փողոցի թիվ _____հասցեի մոտից հատուկ տարածք տարհանեցի _____ հաշվառման համարանիշներով (հաշվառման համարանիշների բացակայության պայմաններում նշվում է այդ մասին) տրանսպորտային միջոցը, որի դռներն ու պատուհանները գտնվում էին————————————————————————վիճակում:

բաց կամ փակ վիճակում, ապահովման միջոցներ կիրառելու դեպքում նշել դրանց մասին:

Տարհանման գործընթացը ————————————————————————————:

կատարել նշում տեսանկարահանում կամ լուսանկարահանում կատարված լինելու կամ չլինելու մասին

Տրանսպորտային միջոցը տարհանվեց ———մակնիշի ———— հաշվառման համարանիշի քարշակի օգնությամբ, որի վարորդն է _____:

անուն, ազգանուն, վարորդական իրավունքի վկայական

Տրանսպորտային միջոցը վերջինիս կողմից տեղափոխվել է ք.Գյումրի, _____ հասցեում գտնվող հատուկ տարածք:

Տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (շահագործողին կամ աշխատակցին) պարզաբանվել է, որ համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 5.3 հոդվածի 7-րդ կետի՝ հատուկ տարածք տեղափոխված շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը դա սեփականատիրոջը կամ նրա լիազորված անձին հանձնվում է հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծախսերն ամբողջությամբ փոխհատուցելուց հետո, իսկ Գյումրի համայնքի ավագանու _____թիվ _____որոշման _____ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցի տարհանման վճարը կազմում է 30000 ՀՀ դրամ, հատուկ տարածքում պահպանության մեկ ժամը՝ 100 ՀՀ դրամ, իսկ յուրաքանչյուր օրվա համար՝ 3000 ՀՀ դրամ:

Նշումներ՝

_____

_____

Արձանագրության պատճենը _____

կատարել նշում առձեռն ստանալու կամ փոստային ծառայության միջոցով առաքելու կամ առձեռն ստանալուց հրաժարվելու մասին:

Արձանագրությունը կազմեց՝ _____

անուն, ազգանուն

Մասնակցությամբ՝ _____

անուն, ազգանուն

Ներկայությամբ՝ _____

անուն, ազգանուն

Արձանագրության պատճենները ստացան՝ _____

անուն, ազգանուն

Ծանուցում. Տարհանված տրանսպորտային միջոցի մասին տեղեկատվությունն ուղարկվելու է ՀՀ ոստիկանություն և համապատասխան հայտարարություն տեղադրվելու է Գյումրու համայնքապետարանի պաշտոնական համացանցային gyumricity.am կայքում:

Ձև 2

«_____» _____ 20 թ. ք. Գյումրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ _____

(շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը բաց թողնելու մասին)

Ես՝ _____

արձանագրությունը կազմող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը

մասնակցությամբ՝ _____

մասնակիցների տվյալները

ներկայությամբ՝_____

տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ շահագործողի կամ աշխատակցի տվյալները՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթուղթ, բնակության կամ ծանուցման հասցե, հեռախոսահամար, կոնտակտային այլ տվյալներ

ղեկավարվելով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 5.3 հոդվածով և Գյումրի համայնքի ավագանու_____ թիվ ___ Ն որոշման պահանջներով, կազմեցի սույն արձանագրությունն այն մասին, որ 20 թ._____ –ին ժամը____ին Գյումրի քաղաքի _____փողոցի թիվ _____հասցեի մոտից հատուկ տարածք տարհանած _____ հաշվառման համարանիշներով (հաշվառման համարանիշների բացակայության պայմաններում նշվում է այդ մասին) տրանսպորտային միջոցը և դրանում առկա գույքը անվնաս հանձնում եմ

_____ :

շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը ստացողի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, հեռախոսահամարը:

_____

բաց թողնվող շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը

_____

շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածքում պահպանելու ժամկետը (օր, ժամ)

_____

շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու արձանագրության համարը և կազմելու ժամանակը

հատուկ տարածքում շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի պահպանման համար հաշվարկված գանձման ենթակա վճարների չափը, անդորրագրերի համարները

Արձանագրությունը կազմեց՝ _____

անուն, ազգանուն

Մասնակցությամբ՝ _____

անուն, ազգանուն

Ներկայությամբ՝ _____

անուն, ազգանուն

Արձանագրության պատճենները ստացան՝ _____

անուն, ազգանուն

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԸ ԿԱՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ԱՅՆՏԵՂ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԸ ԿԱՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Կարգավորման ենթակա խնդրի սահմանումը և առկա իրավիճակը.

2024 թվականի հունիսի 21-ից ուժի մեջ է մտել ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է 41.7-րդ և 41.8-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«41.7) սահմանում է շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները.

41.8) սահմանում է շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանելու համար վճարների չափը.»:

«Շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանելու համար վճարների չափը սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.8-րդ կետի և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 5.3-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի դրույթների կատարման անհրաժեշտությամբ, ինչպես նաև գործունեության տվյալ ոլորտը ենթաօրենսդրական համապատասխան կարգավորումներով համակարգման նպատակով:

Կարգավորման նպատակները և ակնկալվող արդյունքը.

Համայնքի ավագանու որոշման նախագծով սահմանվող կարգավորման հիմնական նպատակներն են՝ ապահովել համայնքի տարածքում շրջիկ առևտրի կետերի կամ տրանսպորտային միջոցների հաշվառման, տեղափոխման և պահպանման միասնական ու հստակ մեխանիզմ, հստակեցնել տվյալ ոլորտում գործող ընթացակարգերը, բարձրացնել համայնքային վերահսկողության արդյունավետությունը:

Այսպիսով՝ նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է ոչ միայն իրավական, այլ նաև՝ առաջացող իրավահարաբերությունների կարգավորման պահանջից:

Ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը.

Սույն որոշումը կրում է նորմատիվ բնույթ և այն պայմանավորված է դրա՝ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար վարքագծի պարտադիր կանոններ պարունակելով՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԸ ԿԱՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ԱՅՆՏԵՂ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՇՐՋԻԿ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐԸ ԿԱՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանելու համար վճարների չափը սահմանելու մասին» որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում և նվազեցում չի նախատեսվում: